ԿԱՐԾԻՔ

Էդգար Սուրենի Կարապետյանի <<Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում>> վերտառությամբ, ԺԲ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունները իրավամբ դասվում են առավել վտանգավոր և լատենտային հանցագործությունների շարքին: Հանցավոր վարքագծի նշված դրսևորման ընդհանուր ծավալում՝ իրենց հակաիրավական և հակաբարոյական բնույթով առանձնանում են անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունները, որոնք վտանգում են ինչպես երեխայի սեռական ազատությունն ու անձեռնմխելիությունը, այնպես էլ նրա ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացումը, անձի բարոյական ձևավորման և սոցիալիզացիայի գործընթացը: Հանցավորության քննարկվող տեսակի դեմ անզիջում պայքարը յուրաքանչյուր իրավական պետության առանցնահերթություններից է: Այդ պայքարը ենթադրում է նպատակամղվածություն, բարձր ինտենսիվություն, պետական և ոչ պետական կազմակերպությունների և հասարակության ներգրավվածություն, համագործակցություն, անհրաժեշտ և արդիական գործիքակազմի կիրառում, հատուկ պատրաստված կադրերի ներգրավվածություն և բազմաթիվ այլ գործոններ, որոնց անհրաժեշտ և բավարար համադրությունը միայն կարող է ապահովել ցանկալի արդյունք:

Հարկ է նկատել, որ երեխաների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների ուսումնասիրությանը նվիրված տեսական աշխատանքներ ՀՀ-ում գրեթե բացակայում են, իսկ կատարված փոքրաթիվ հետազոտությունները ի զորու չեն համալիր կերպով ներկայացնելու նշված հիմնահարցին առնչվող բազմաթիվ խնդիրները, օրենսդրական բացերը, գործնական բարդությունները:

Վերոգրյալը հավաստում է ընտրված թեմայի արդիականությունը և գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նաև նրանում, որ պաշտպանության ներկայացվող դրույթներում հեղինակը ներկայացնում է մի շարք առաջարկներ, որոնց ներմուծումը ՀՀ քրեական օրենսդրության մեջ կարող է էապես նպաստել քննարկվող հանցատեսակների դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանը: Պետք է նշել , որ հեղինակի առաջ քաշած շատ գաղափարներ ու դրույթներ լուծում են տալիս մի շարք խնդրահարույց տեսական և գործնական հարցերի և կարող են նպաստել հանցագործությունների

որակման գործընթացի առավել դյուրինացմանը, ապահովել իրավական որոշակիության սկզբունքի կենսագործումը:

Հետազոտության առավել արժեքավոր տեսական ու գործնական նշանակություն ունեցող գաղափարներն ու դրույթները, մեր կարծիքով, հանգում են հետևյալին:

Հեղինակի կողմից համակողմանիորեն ուսումնասիրվել և վեր են լուծվել <<սեռական ազատություն>> և <<սեռական անձեռնմխելիություն>> եզրույթները, դրանք քննարկվել են տարբեր իմաստներով, անդրադարձ է կատարվել այդ կատեգորիաներին առնչվող դոկտրինալ մեկնաբանություններին, ինչի հիման վրա հեղինակի կողմից կատարվել են ինքնուրույն և տրամաբանական եզրահանգումներ: Առաջարկվել է օրենսդրորեն սահմանել <<սեռական հանցագործությունների>> հասկացությունը՝ դրանք համաբնույթ այլ հանցատեսակներից հստակ տարբերակելու նկատառումներով: Խոր ուսումնասիրության է ենթարկվել արտասահմանյան տարբեր երկրների քրեական օրենդրությամբ նախատեսված սեռական հանցագործությունների համակարգը, հատուկ ուշադրություն է դարձվել երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործությունների և, հատկապես, բռնի սեռական հանցագործությունների օրենդրական կառուցվածքի առանձնահատկություններին: Արտասահմանյան փորձի ուսումնասիրության հիման վրա կատարվել են օրենսդրական փոփոխությունների մի շարք առաջարկություններ, որոնք կարող են էապես նպաստել ՀՀ քրեական օրենսդրության կատարելագործմանը: Մասնավորապես՝ հեղինակը նշում է, որ որպես բռնի սեռական հանցագործությունների որակյալ տեսակ արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ սահմանվում է հանցանքը վերընթաց ազգակցական կապերն օգտագործելով կատարելը, ծնողի, որդեգրողի կամ այն անձի կողմից կատարելը, ում դաստիարակության կամ խնամքի ներքո է գտնվում երեխան, կամ ումից երեխան գտնվում է ծառայողական կամ աշխատանքային կախվածության մեջ: Վերջինիս կարծիքով համաբնույթ որակյալ տեսակ պետք է նախատեսել նաև ՀՀ քրեական օրենսդրությամբ: Բացի այդ՝ հեղինակը նշում է, որ սեռական ներթափանցմամբ զուգորդված սեքսուալ բնույթի բռնի գործողություններն օժտված են առավել բարձր հանրային վտանգավորությամբ, քան սեռական բռնության այն տեսակները, որոնք կատարվել են առանց ներթափանցման: Հեղինակն առաջարկում է օրենսդրորեն նախատեսել բռնի անառակաբարո գործողությունների հանցակազմ, որի տուժող կարող են համարվել նաև չափահասները և բռնի սեքսուալ բնույթի այն գործողությունները, որոնք զուգորդված չեն ներթափանացմամբ, որակել այս հանցակազմով:

Ուսումնասիրելով սեռական հանցագործությունների, բռնի սեռական հանցագործությունների և անչափահասների նկատմամաբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների շարժընթացը՝ հեղինակը հանգել է հետևության,

որ դրանք ունեն բացասական միտումներ և անհրաժեշտ է չեզոքացնել մի շարք անբարենպաստ գործոններ, որոնք կարող են հանգեցնել հանցավորության այս դրսևորման հետագա աճին: Ներկայացվել է նաև սեռական հանցագործությունների դասակարգումը, ինչի հիման վրա՝ հեղինակն առաջարկել է երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործությունները ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսել առանձին գլխով, ելնելով դրանց օբյեկտի առանձնահատկություններից:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հեղինակն առաջարկում է որպես <<անօգնական վիճակի>> տարիք սահմանել 14 տարեկանը, գործող 12 տարեկանի փոխարեն՝ հիմնավորելով այդ հանգամանքը ՀՀ ազգային որոշ առանձնահատկություններով, դաստիրակության և սոցիալիզացիայի յուրահատկություններով: Առաջարկվում է նաև կիրառել այսպես կոչված՝ <<Ռոմեոյի ու Ջուլիետի>> օրենքը և անչափահասի դեմ ուղղված սեռական հանցագործությունը չհամարել ծանրացնող հանգամանքով կատարված, եթե սեռական հարաբերությունների մասնակիցների տարիքային տարբերությունը չի գերազանցում 2 տարին: Սա իհարկե վիճելի դրույթ է, բայց, անշուշտ, արժանի է ուշադրության:

Կարելի էր նշել ատենախոսության մեջ առաջ քաշված և մեր կարծիքով հիմնավոր ու ճիշտ լուծում ստացած մի քանի այլ դրույթների մասին, սակայն այսքանն էլ բավարար է հավաստելու, որ գրախոսվող թեկնածուական ատենախոսությունն արժեքավոր աշխատանք է:

Պետք է նշել, որ ատենախոսության հեղինակին հաջողվել է գիտական պատշաճ մակարդակով խոր և համալիր հետազոտություն իրականացնել: Դրան նպաստել է հատկապես այն հանգամանքը, որ նա լայնորեն օգտվել է դատական պրակտիկայի նյութերից, վիճակագրական ծավալուն տվյալներից, խոր վերլուծության է ենթարկել այլ երկրների օրենսդրական փորձը, միջազգային փաստաթղթերը, քննադատական վերլուծության է ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներն ու դրանց կիրառման պրակտիկան: Դա թույլ է տվել հեղինակին բացահայտելու ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերն ու թերությունները և հետաքրքիր առաջարկություններ ներկայացնելու՝ ուղղված քննարկվող իրավանորմերի օրենսդրական կատարելագործմանը և լրամշակմանը:

Ատենախոսության անվիճելի արժանիքներից է այն, որ կատարված հետազոտությունների հիման վրա հեղինակի ներկայացրած առաջարկությունները հիմնավոր են և կարող են էապես նպաստել իրավակիրառ պրակտիկայի ու ՀՀ քրեական օրենսգրքի կատարելագործմանը:

Այսպիսով, կարելի է հավաստել, որ սույն թեկնածուական ատենախոսությունը խիստ արդիական և արժեքավոր աշխատանք է: Դրանում առաջին անգամ ՀՀ-ում խոր և բազմակողմանի հետազոտության են ենթարկվել անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործություններին վերաբերող

հիմնախնդիրները. տրվել է անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների ընդհանուր բնութագիրը, ուսումնասիրվել է այս հանցատեսակների դեմ քրեաիրավական պայքարի արտասահմանյան փորձը, վեր են հանվել դրանց օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, ինչպես նաև առաջարկություններ են արվել քրեական օրենսդրության կատարելագործման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով կատարված աշխատանքը, կցանկանայինք որոշ նկատառումներ արտահայտել դրա կապակցությամբ, որոնք հանգում են հետևյալին:

1. Ուսումնասիրելով անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների միտումները՝ հեղինակը դրանք համադրել է ԱՊՀ երկրներում առկա հանցավորության միտումների հետ: Մինչդեռ աշխատանքի շրջանակներում հեղինակի կողմից ուսումնասիրվել են արտասահմանյան մի շարք զարգացած իրավական համակարգ ունեցող երկրներում երեխայի դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների առանձնահատկությունները, օրենսդրական նկարագրման յուրահատկությունները, քննարկվող հանցագործությունների որակմանն առնչվող հիմնախնդիրները: Այս համատեքստում ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակի կողմից ուսումնասիրվեին նաև քննարկվող հանցատեսակների միտումները արտասահմանյան երկրներում: Այս պարագայում՝ համեմատական վերլուծությունն առավել ամբողջական և լիարժեք տեսք կունենար և թույլ կտար անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների միտումներն ընկալել ոչ միայն տարածաշրջանային, այլև համաշխարհային մակարդակով:
2. Աշխատանքի շրջանակներում հեղինակի կողմից օգտագործվել են ՀՀ դատական պրակտիկայից վերցված մի շարք նյութեր, ինչն, իհարկե, ողջունելի է: Սակայն ցանկալի կլիներ, որպեսզի օրինակներ ներկայացվեին նաև դատավարական ավելի վաղ փուլերում առկա խնդրահարույց հանգամանքների, արարքի որակման հետ կապված օրենսդրական խոչընդոտների և բացերի վերաբերյալ: Այս լույսի ներքո, կարծում եմ, նպատակահարմար կլիներ նաև ուսումնասիրել արտասահմանյան դատական և քննչական պրակտիկայի նյութերը՝ համադրելով դրանք տեղական փորձի հետ:
3. Աշխատանքի շրջանակներում հեղինակը նշում է, որ ՀՀ-ում, ըստ պաշտոնական վիճակագրության սեռական հանցագործությունները կազմում են ընդհանուր հանցավորության 0.4-0.7 %-ը: Նշվում է նաև, որ հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ

առկա են մի շարք բացասական միտումներ, որոնք կարող են մոտեցնել հանցավորության այս դրսևորման ծավալը տարածաշրջանի այլ երկրների ցուցանիշներին: Սակայն թե ի՞նչ բացասական միտումների և գործոնների մասին է խոսքը, որոնք կարող են հանգեցնել հանցավորության այս դրսևորման աճին, ըստ էության, չի նշվում, հստակ ներկայացված չեն նաև այն միջոցառումները, որոնք կարող են չեզոքացնել այդ բացասական միտումները:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները ամենևին չեն նսեմացնում աշխատանքի արժանիքները, մասնակի բնույթ են կրում, պայմանավորված են աշխատանքն էլ ավելի լիարժեք և ամփոփ տեսնելու ցանկությամբ, իսկ որոշ դեպքերում մեր անձնական կարծիքն են ներկայացնում և չեն կարող էապես ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա: Ատենախոսական հետազոտության արդյունքների հավաստիությունը կասկած չի հարուցում: Ատենախոսությունը կատարված է պատշաճ գիտական մակարդակով, ունի հարուստ էմպիրիկ և աղբյուրագիտական հիմք:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Վերոգրյալի հիման վրա կարելի է հավաստել, որ <<Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում>> վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը լիովին բավարարում է և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի <<Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 7-րդ կետի պահանջներին, իսկ դրա հեղինակը՝ Էդգար Սուրենի Կարապետյանը արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի
ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Գաբուզյան

Ա. Գաբուզյանի ստորագրությունը
հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի
տեղակալ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Խաչիկյան